


ԳՐԱԴԱՐԱՆ 13466
3
ՊՐՈՅ. Բ. ՄԻԶՆԵՐԱԿ

ՃՈՒՂՋ և ԵՐԿԱՐ

ապրելու համար ներկայ բժշկակ, գիտութեան վերջին
հետազոտութիւնների հետեւանքները

Կազմեց Ա. Բաղիրեան



577

հ-81

Ար. Մերսակով.

20 JUL 2010

13595

29 APR 2013

143 "Գրչուրշդ" բնագրութիւն
Մ. Հայոցի կողմէ

258 ՊՐՕՖ. Ի. ՄԷՂՆԻԿՈՎ

Ի պատճենագրի վերաբերյալ
Տարբար բրածքութեան շահագործ
Քայլ պահպանութեան մասին.

ԱՌՈՂՋ և ԵՐԿԱՐ 577

Ի-81

ապրելու համար ներկայ թժկակ. զ
գիտութեան վերջին հետազոտու-
թիւնների հետեւանքները

26

0.25 2 3 4

10282

610
150-Մէ


Դրեց Ա. Խապիրեան



Թ Ի Ժ Ի Ւ

Տպարան «ՀԵՐՄԵՆ», Մուլտանեան փող., № 13.

1911



Ար. Մերվանով. Պոգ. ի. Մէջնհկով

ԱՌՈՂՋ ԵՒ ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅ
ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՔԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵԼԱՆՔՆԵՐԻ

Lactobacilline-ը (կաթնաբացի)

Ներկայումս այն միակ միջոցն է, որ մարտըն-
չում է այդ մահաբեր միկրոբների դէմ և խափանում
նրանց նեխուժները:

Պրօֆ. Մէջնիկով 1902 թ. աւետեց իր գիւտի
մասին, որ նա գտել է «Եօղուրու»-ում բուժարար,
անգնահատելի մեծաքանակ բացիներ ընդունակ
Lactic acid (կաթնաթթւուտ) արտադրելու, որը
արտաքսում է հարիւր միլիօնաւոր վլասակար նե-
խիչ միկրոբներ ստամոքսա-աղիքային անցքերից:
Այդ միկրոբները թոյն են արտադրում, զանազան
հիւանդաւթիւններ, կանխահաս ծերութիւն և մահ
պատճառելով: Այսպիսով lactobacilline-ի յատկութիւ-
նը մարդկանց հնարաւորութիւն պիտի տայ երկա-
րակեցութեան հասնել, այն է՝ կազմաբանական բնա-
կան հասակի:

Լակտոբացիլինի էական հիմունքները ներկա-
յացրած է Փրանսիական բժշկական ակադեմիային՝
ինչպէս նաև եւրոպական բոլոր այդօրինակ հաստա-

տութիւններին վերոյիշեալ անունով:

Մէջնիկովի ընդարձակ զեկուցումը չափաղանց հետաքրքրութիւն առաջ բերեց գիտական աշխարհում այն պատճառով, որ նա ունէր բժշկական գիտութեան առաջադիմութեան և սադմնաբանական հետազօտութիւնների վերաբերյամբ։ Նա յաջողութեամբ գործ էր ածւում բոլոր հիւանդութիւնների սկզբնապատճառ եղող արեան ինքնաթունաւորման և այլ ներքին գործարանների խանդարման դէմ։

Ընդհանրապէս յայտնի բծաւոր տիֆ հիւանդութեան վրայ փորձուեց լակտօրացիլինը հիւանդանոցներում, որից կրկնակի բարեյաջող արդիւնք ստացուեց։ 1) կրծատելով տենդային դրութեան շըրջանը, և 2) կազդուրումը արագացնելով։ Լակտօրացիլինը ընդհանրապէս չափաղանց բուժիչ և սննդարար է, վերին աստիճանի նպաստող ընդհանուր տենդային դրութիւնների ժամանակ։ Նրա բարերար ազդեցութիւնը փորձուած է նոյնպէս բոլոր անկարգ հիւանդութիւնների, ստամոքսա-աղիքային, մարսողական օրգանների և նրանց մէջ անմարսելի մընացած ներքին զանգվածների վերաբերմամբ։

Ժամանակակից մարդը ապրում է ոչ բնական կազմաբանական հիմունքներով, կարճ են նրա օրերը և նրանց պաշտպանութեան միջոցները շատ թոյլ և Մէջնիկովը ասաց։

Գիտութեան ճիգն ու յաջողութիւնը միկրոբների և ֆակոցիտների ուսումնասիրութեան մէջն է, որ-

պէսզի իւրաքանչիւր անհատ կարողանայ յաջողութեամբ զինուել ընդդէմ զանազան հիւանդութիւնների, կանխահամա ծերութեան և մահուան։

Մէջնիկովը շատ տարիներ առաջ սկսել էր երկայնակեցութեան հետազօտութիւնը, թէ ինչու համար որոշ թուով մարդիկ և մի քանի կենդանիներ աւելի երկար են ապրում, քան սովորաբար ընդունուած է ներկայ կեանքի ժամանակամիջոցը։ Յաջորդաբար և լուրջ հետազօտութեամբ նա ուսումնասիրեց, որ այն կենդանիները, որոնք բնութիւնից օժտուած են կարճ աղիքներով, ապրում են շատ երկար՝ քան համասեն այն կենդանիները, որոնք ունին երկար աղիք։ Մարդը ժառանգել է շատ երկար աղիք, մինչդեռ մի քանի չինալան «Սուրբ» անուանուած ազուններ բոլորովին հաստ աղիք չունենալով—ապրում են համարեա հազար տարի և մինչև վերջը պահպանում են իրանց կենսուրախութիւնը։ Թութակը կարճ աղիքներ ունի, և հարիւր տարուց աւելի է ապրում։ Կրիաները իրանց շատ կարճ հաստ աղիքների պատճառով շատ երկար են ապրում քան մարդիկ։

Մէջնիկովը սկսեց մանրագիտակով հետազոտել մարդու և զանազան կենդանիների հաստ աղիքի պարունակութիւնը, և գտաւ, որ կանխահամա ծերութեան բուն պատճառն է առհասարակ աղիքների միկրոբների թոյների աղիքեցութիւնը։ Այդտեղ գտաւ նա իր որոնած հարցի ստոյդ և անժխտելի պատաս-

իւանը: Նա յայտնեց, որ մարդիկ իրանց կեանքը վտանգի չենթարկելու և մարսողութիւնը կանոնաւորելու համար պէտք է գործածեն լակտօբացիլինը: Նոյնպէս նա յայտնեց, որ մարդու աղիքների մեծաքանակ անցքերի զանազան նեխիչ հիւանդութիւնները միկրոբների արտադրած թոյներիցն է, որ աղիքների ներքին պատերը ծծելով, պատճառում են զանազան հիւանդութիւններ, կանխահառ ծերութիւն և մահ: Մարդ բնչպէս երկարացնէ իր տարիները՝ երբ իր մեծաքանակ աղիքների մէջ պարունակում են միլիոնաւոր վնասակար միկրոբներ և թոյներով նեխուած կղկղանք:

Հաստ աղիքում միկրոբների աճումը զարհուրեցուցիչ է: Նրանց թիւը օրական մօտաւորապէս 128,000,000,000,000 է: Մաղմաբանական հետազոտութիւնը ցոյց տուեց, որ մեր խորշերի երրորդ մասը իւրաքանչիւր օր ենթակայ է վարակման և ոչնչացման, որի մի մասն է միայն ազատ:

Եթէ թոյն է արտադրում աղիքների անցքերում, հակառակ բացիլներով էլ կարելի է արգելել նրանց վնասակար աղիքութիւնը և այսպիսով առաջն առնել զանազան հիւանդութիւնների գոյացման: Լակտօբացիլը երբեք պատուաստ խանգարում և լուծում է միկրոբների կազմը, որոնք այլիս անկարող են լինում թոյն արտադրելու:

ՄԱՐԴՈՒ ԿԱԶՄԱԲԱՆԱԿԱՆ ՕՐԸ 140 ՏԱՐԻ է

Նախկին մարդու հետ համեմատիլով, ժամանակակից մարդու կեանքի համար սակաւ օրեր են ընդունուած: Ուրեմն նա պարտաւոր է հետեւել երկարակեցութեան անհրաժեշտ պահանջներին: Մէշնիկովը յայտնեց, որ այս ձեւի հետազոտութիւնների շնորհիւ կեանքը կարող է երկարացուել:

Մաղմաբանական հետազոտութիւնները ցոյց տուեցին, որ մահերի մեծ մասը պատահել է ուղղակի կամ անուղղակի ստամբաս-աղիքներից, աղիքների միկրոբների թոյների պատճառով: Աղիքները ի ծնէ ազատ են նեխումից, միկրոբներից, բայց շուտով տեղի է ունենում վարակումը: Մանուկի առաջին մեկոհյան (կղկղանքը) ազատ է թունաւոր միկրոբներից, բայց արգէն 3—10 ժամից յետոյ սկսում է վարակումն և հետզհետէ սկսում է աւելի սաստկանալը: Մէկ տարեկանից մինչև հինգ տարեկան երեխայի աղիքային ֆլորան սկսում է բարդանալ երբեխան կաթնային մսունդից անցնում է խառն սնունդի, այն ժամանակ յայտնաւում են նոր թունաւոր միկրոբներ: Հետևապէս՝

1. Գոյութիւն ունի ծծկեր մանուկների հիմնական աղիքային ֆլորա:

2. 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մէջ գոյանում են լրացուցիչ աղիքային ֆլորա, միանալով հիմնական ֆլորաներին և բաղկանալով գլխաւորապէս նեխիչ միկրոբներից:

3. Հասակաւոր մարդն ունի իր առանձին հիմ-

նական աղիքային ֆլորան, գերիշխում են դաժան և թունաւոր միկրոբները,որոնք առաջացնում են նեխումների եռանդուն պրօցէսներ, որի հետևանքը այն է լինում, որ մարդկային ցեղի մի երրորդ մասը մեռնում է 50 տարուց առաջ:

Արդի մարդու բազում աղիքների անցքերում միկրոբները թոյն արաաղերով, թունաւորում են արինը մահացու թոյներով: Մէջնիկովը բաժանելով հաստ աղիքի թունաւոր միկրոբները, և սրսկելով ճագարների երակներում՝ մահ է առաջացնումյայտնապէս թունաւորման նշանով, և յետոյ ընդհանրապէս նկատում են ցնցումներ, անդամալուծութիւն, փսխում և արինահոսութիւն, իսկ եթէ մի փոքր աւելի սրսկել՝ այն ժամանակ մահը պատահում է վայրկենական: Մի շարք փորձերով Մէջնիկովը անժիսելի փաստերով ապացուցեց, որ գոյութիւն ունի թունաւոր միկրոբներ աղիքների ֆլորաներում, և թէ այդ թունաւորումը ոչ միայն խրօնիկական է լինում, այլ շատ յաճախ յանկարծական: Մէջնիկովը ասում է, որ այդ թունաւոր նիւթերը զարգանում են աղիքային բազմաթիւ ֆլորաներում զանազան ձեւերով: Աղիքների թոյները ծծելով, աստիճանաբար թունաւորում է ամբողջ օրգանիզմը և մաշում ու թուլացնում է նրա ընդդիմադրական ոյժը, միևնույն ժամանակ ուժեղացնելով թունաւորման ներգործութիւնները:

Ծերութիւնը և կանխահաս մահը առաջա-

նում են աղիքային նեխիչ բակտերիաների թոյների խրօնիկական թունաւորմանը հետևանքով: Եւ երբ հաստ աղիքների հիւանդութիւնը սուր կերպարանք է ստացել և յաջողուել է անդամահատութեամբ հեռացնել հաստ աղիքը, այն ժամանակ այդ հիւանդները միանգամայն՝ բոլորովին առողջանալով շատ լաւ են զգացել իրանց: Հետևաբար անհրաժեշտ է առաջս առնել կամ գոնէ թուլացնել այդ թունաւոր նիւթերի ներգործութիւնները. ահա դրա համար անհրաժեշտ է գործածել օրգական մի որոշ չափով, մօտաւորապէս մի փունտ մաքուր կուլտուրական լակտօրացիլը, որը խափանում է աղիքների նեխումները, ֆլուսակար բակտերիաների գործունէութիւնները և միևնոյն ժամանակ արգելում է շնչերակների կարծրացումը:

Բայց գլխաւոր հարցը նրանումն է, որ պրօֆ. Մէջնիկովը թափանցեց և յայտնեց, որ աղիքային թունաւոր, միկրոբների հետ պէտք է կուռել այն բնական միջոցներով, որ ընութիւնը՝ ինքը պահպանում է նրանցից նորածին սանկան՝ աղիքներում զարգացնելով կուլտուրական հակամարտնչող միկրոբներ:

Բիէնստէկ և Տիսսիէր ցոյց տուին առանձին փորձերով, որ կաթնային կուլտուրական թթւուտի բացիները զարգանալով միատեղ նեխում առաջ բերող մեկրոբների հետ կազմալուծում են վերջինների մլասակար նիւթերը:

Տիսսիէրի փորձերից մէկը հետևեալն է. վերցնել

երկու սրուակ, իդնել իւրաքանչիւրի մէջ մի մի կը-
տոր միս և վրաները ածել բնախօսական լուծանիւթ
(ֆիզиологический ростворъ) և ու cl (хлористий нат-
րիй) և յետոյ նրանցից մէկի վրայ աւելացնել քիչ
շաքարանիւթ և ցանել նրա վրայ կաթնային թթւու-
տի բացիներ և ամենավերջ լցնել վագկինի իւղ՝
որպէս զի առաջանան նեխիչ միկրոբներ։ Ակզրու-
երկու սրուակներում 37° աստ. ակսում է զարդանալ
նեխման պրօցէսս, միաժամանակ առաջանում է վատ
դազերի հոտ, բայց յետոյ այն սրուակում, ուր յետոյ
շաքարանիւթն է զրուած, նեխումը հետզհետէ կանգ
է առնում այն ժամանակ, երբ զարդանում են կաթ-
նային թթւուտի բացիները, որոնք զուտով տիրա-
պետում են մրցման դաշտը, վերջ ի վերջոյ նրանց
ոչնչացնում են, որովհետեւ նրանց համար կորստա-
բեր է կաթնային թթւուտը և սրուակում բոլոր նե-
խիչ թունաւոր միկրոբները ոչնչանում են, իսկ սրու-
ակում մսի մեծ մասը մնում է անլուծելի, այն ինչ
միւս սրուակում լիովին շարունակում է նեխումը և
սմբողջովին լուծում է նեխիչ միկրոբների ներ-
գործութեամբ։ Բազմաթիւ փորձեր ցոյց տուին, որ
նոյն ներգործութիւնները առաջանում են մարդկանց
օրդանիգմներում։

Նիւ. Եօրկում Հերթերի փորձերը, որ չների ա-
ղիքներում յաջորդաբար ներմուծելով զանազան
միկրոբների որոշ քանակութիւն, տեսաւ թէ որպի-
սի նեխումն է առաջ դալիս, մինչդեռ լակտօբացիլին

մտցնելու հետևանքն այն եղաւ, որ յայտնապէս նուա-
զել էր նեխումը։

Աւելի հետաքրքիր և որոշ հետևանքների հա-
սաւ յայտնի Մ. Կոհէնդին իր և ուրիշների վրայ
կատարած փորձերով, որոնք 6 ամսից աւելի տևեցին.
իր փորձերի ժամանակ նա սովորական սնունդները
դառնարկեց բուսեղէնների, մսի և օսլայական նիւ-
թերի, որոնց առանձին առանձին շաբաթներ յատ-
կացնելով՝ բազդատեց ստացած հետևանքները և յե-
տոյ սնունդը բացառապէս մսի փոխարինելով գոտու
աղիքներում նեխման աճում։ Այս համեմատութիւն-
ները պարզ և որոշ ցոյց տուին, թէ աղիքներում որ-
քան աճեց նեխումը (թիգրո-ցերայ կուլոտա), որը
աղիքների նեխման աստիճանը ցոյց տուող ամենա-
ուղիղ նշանն է։ Հիմնուելովայս վերջին փորձի վրայ՝
Կոհէնդին մերժում է բոլոր մսեղէն սնունդները և դրա
փոխարէն հետևեց մի առ ժամանակ, զանազան շա-
բաթներ, բուսեղէն նիւթերի հետ միասին օրական
մի որոշ չափով և լակտօբացիլին ընդունել, որի
արդիւնքը հիանալի էր, որովհետև աղիքների նե-
խումը միանգամայն զարդարել էր։

Կղկղանքների հետազօտութեամբ նոյնպէս աղա-
ցուցւեց, որ լակտօբացիլին մեծ քանակութեամբ ար
տագրում է ամենաազգու կաթնաթթւուտ կոչուածը,
որը կղկղանքում շաբաթներով է պահում իր գոյու-
թիւնը և շարունակում է տրդելու աղիքների նեխումը։

Այս օրինակ փորձերի հետևող բազմաթիւ թիւկ-

Աերը Թբանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում, Անգլիայում, Բուսաստանում, մինչև անգամ Հնդկա-
շնաստանում ստացան միկնոյն հետևանքները:

Մէջնիկովը ասում է.

Արդէն վաղուց հաստատուած է, որ գործածե-
լիս այն կենդանիների սիսը կամ արիւնը, որը
արդէն սկսել է լուծուել, առաջացնում են լուրջ
խանգարմունք միր օրգանիզմում: Ներսուծելով
նեխուած նիւթերը մեր օրգանիզմում սրսկման միջո-
ցաւ արեան մէջ կամ կաշու տակ, անմիջապէս առա-
ջացնում է արագ մահ: Ներկայումս լիովին ապա-
ցուցուած է, որ այդ թոյներն են նեխիչ միկ-
րոբների բերերը, այսինքն այն չորս տեսակ
միկրոբները, որոնք բնակում են մեր աղիքներում:

Բացի այդ, թոյների առաջացնող սուր թու-
նաւորման, աղիքային միկրոբները արտադրում են
նիւթ, որոնք առաջացնում են խրօնիքական խան-
գարմունք օրգանիզմի մէջ: Այդ նիւթերն են՝ ին-
տոլ և ֆէնոլ, որոնք արտադրում են մեր աղիքների
ֆլորաների միկրոբները՝ ոչ մեծ քանակութեամբ:
Բայց այդ նիւթերը աստիճանաբար ներգործում են
մեր ամենաթանկագին օրդանների, ինչպէս՝ շնչե-
րակների, սրաի, երիկամունքների և ուղեղի վրայ:
Արտադրելով ամեն օր թէպէտ ոչ մեծ քանակու-
թեամբ ինուլ ֆէնոլ, վերջի վերջոյ առաջացնում
են շնչերակների կարծրացումն, նոյնպէս և յիշեալ
օրգանների պնդախտութիւն: Մեր նպատակի

ՀԱՅԻ ՀԱՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Պ. Ա. ՊՈՂԻԿԻ ԲՈԼՈՒԹԵԿԱ
7/31 1922
Վ. Ա. ԽՈՎՈՎ Կ. Ա. ԽՈՎՈՎ

փնտրումը այն է՝ մարդու վայրի աղիքային ֆլորա-
ները կուլտուրական աղիքների փոխել, այսինքն
վասակար միկրոբները փոխարինել օգտակար միկ-
րոբներով: Մի քանի տեսակ միկրոբներ արտադրում
են թոյներ, որոնք շարունակ ձելով մեր արիւնը,
պէտք է անխուսափելի կերպով փոխեն մեր հիւսի
ւածքները, սրտի անօթները և այլն: Որ մի քանի
տեսակ միկրոբներ գերազանցում են ֆէնոլ թոյնը
արտադրութեամբ: Հէնց այդ թոյները ներգործում
են շնչերակների վրայ և առաջացնում են շնչերակ-
ների կարծրացումն, որը համարւում է կանխահաս
ծերութեան գլխաւոր նշաններից մէկը: Ուրեմն չկայ
ոչինչ զարմանալի ենթադրելու, որ լակտոբացիլինը
խափանելով աղիքային թոյների արտադրութիւնը,
կարող է յետաձգել կանխահաս զառամութիւնից
մեր օրգանները: Եւ այսպէս՝ ինչպէս լակտոբացիլը
ըռուում է առաջի տեղը այդ օգտակար միկրոբների
մէջ, ուրեմն մենք իրաւունք ունինք ենթադրելու,
որ նրանց բարերար ներգործութիւնը կարող է հաս-
ցնել մարդկանց երկարակեցութեան:

Որպէս զի համենք իրական հետեանքների,
մենք կանգ առանք ամենաազգու Բուլգարական
Շեորութացի բացի վրայ, որն արտադրում է ամե-
նաազգու կաթնաթթւուտ, և որը միայն կարող է
կազմալուծել այդ թունաւոր միկրոբների արտա-
դրած նեխումները:

Հետազնետէ աւելի և աւելի պարզում է, որ

կաթնային խմորում պէտք է բռնէ ամենակարեղը և ամենալայն տեղը մարդկանց սունդների մէջ, նոյնպէս և պէտք է համարուի ամենաազգուն և բուժարարը դանազան հիւանդութեանց համար:

Մէջնիկովը այս հարցի առթիւ նկատում է, որ զատ սկզբնական ժողովուրդների բնազդը կարծես թէ նախատեսել է կաթնային թթւուտի գործածութեան օգտակարութիւնը՝ առանձնապէս տաք երկիրներում, որտեղ ամեն աხսակ նեխման պրօցէսներ առաջանում են ուժեղ կերպով։ Եգիպտոսում անյիշատակ ժամանակից գործ էին ածւում մի տեսակ մածուն «լեբեն» անունով։ Նրա նման, բայց տարբեր պատրաստութեամբ Ալժիրի ժողովուրդը գործարում է «լեբենը», ինչպէս և Արաբները։ Բատ Պլիսի վլկայութեան՝ յոյների և հոռվմայեցիների մէջ մածունի գործածութիւնը վաղուց յայտնի էր և այժմ էլ գործածում է մեծ քանակութեամբ, իսկ Պարթեները մածունը մատուցանում էին ինչոյքից յետոյ։

Փրանսիական ճանապարհորդ Թօան ասում է, որ նոյն սովորութիւններն ունին հարաւային և արեմտեան Աֆրիկայի ցեղերը, որտեղ մածունը նրանց զլիսաւոր մնունդներից մէկն է։ Բուլգարական ժողովուրդը գործ է ածում մի առանձին տեսակ կաթնային խմորում «եօլուրտ» կոչուած, Բալկաննեան թերակղու բնակիչները գործածում են մածուն, նոյնտեսակը մեծ բանակութեամբ գործա-

ծում են Փոքը Ասիայում հայերը, Կովկասովման էլ տեղացիք գործածում են կէֆիր և կրոմիս, որոնք խմորուում են սունկերով և կաթնային լակտիներիաներով։ Վերջապէս Ռուսաստանում մեծ քանակութեամբ գործածում են պրօստօկւաս և վարաննեց կոչուածները. այսպիսով մարդը բոլորպին անգիտակցարար ներմուծելով իր աղիքներում ահազին քանակութեամբ կաթնային թթուատի բակտերիաներ՝ դրանով մեղմացնում է իր աղիքային նեխումները։ Ըստ երևոյթին շատերին թուում է, թէ ներկայիս էլ կարելի է հետեւել այդ հինաւուց սովորութիւններին, բայց գործին մօտ ծանօթութիւնը և զանազան կաթնային խմորումների բացիների և միկրոբների ուսումնասիրութիւններն ապացուցանում են, որ այդպէս չէ։ Ամեն մի կաթնային խմորում չի կարող ծառայել նպատակին, և որ բոլոր երկիրների զանազան կաթնային խմորումները, որոնք պատրաստում են սովորական եղանակներով, թէպէտ եփած կաթից, բայց նրանցում կարող են լինել շատ վնասակար միկրոբներ և այլ միկրօ-օրգանիզմներ, հիւանդաբեր սաղմեր, որոնք կարող են առաջացնել վնասակար խմորումներ, օրինակ իւղաթթւուտ, քացախային, ալկօհօլային և այլ խմորումներ՝ որոնք վատ ներգործութիւն են ունենում մարսողական և այլ օրգանների վրայ, մանաւանդ շարունակ կէֆիր և կումիս և այլն գործածելը. բացի դրանցից, սովորական կաթնային խմորումների բակտերիաները չեն կարող

կուել աղիքների թունաւոր բակտերիաների հետ։ Ահա այդ բոլորը ի նկատի ունենալով՝ Մէջնիկովը կանգ առաւ կաթնային այն ամենաազդեցիկ խմորսան վրայ, որը մինչև այժմ գոյութիւն ունեցող բուլորն կաթնային խմորումների մէջ գերազանցէ, Յանդամ աւելի ներգործական, քան այլ կաթնային խմորումների բացիները։ Եսու լգարական բացիլը միացնելով մի ուրիշ բացիլի հետ, որը կոչւում է՝ լակտօբացիլին, և միայնգամայն անվաս է մարդու օրգանիզմին, բանմաթիւ փորձողների թւում կոհենդին իր անձի և ուրիշների վրայ փորձեց 18 ամիս շարունակ, որ այլևս ոչ մի նեխման հետևանք, նոյնպէս և ոչ մի վնասակար սիլլոր նրանում չէ պարունակում։ Այսպիսով Մէջնիկովի առաջարկած կաթնային խմորումը բաղկացած է երկու մաքուր կուլտուրական բացիլներից, մէկը բուլգարական, միւսը եւրոպական ծագում ունեցող։ այս ձեռվ պատրաստող կաթնային խմորման մասնակցում են միայն երկու կուլտուրական բացիլներ, առանց որևէ ուրիշ վնասակար բակտերիաների։

Առաջ կարծում էին, որ կէֆիրը և կումիսը կաթից աւելի դիւրամարս են, իբրև թէ խմորման մասնիկները գտնուում են լուծուած վիճակում։ Այլ խօսքով, կէֆիրը և կումիսը համարում էին ինչպէս կէս մարտուած։ Այժմ չէյեմի և Ռովինկի ուրիշների հետազոտութիւնների համաձայն այդ կարծիքը այլևս չէ կարող գոյութիւն ունենալ։ Նրանք կատարել են

փորձեր, որոնք վճռողաբար ապացուցանում են, որ կէֆիրը և կումիսը իրանց մէջ պարունակում են կաթնային թթւուտի շատ չնչին տոկոս։

Մէջնիկովի, Կոհենդի, Հէյեմի և ուրիշ շատերի ըստ նոր հետազօառութիւնների՝ կէֆիրը և կումիսը իրապէս օգտաւէտ են շատ քիչ դէպքերում, բայց նրանք իբրև սնունդ երկար չեն կարող գործածութեան համար յանձնաբարուել։ Աղիքնային խրօնիկ նեխման նկատմամբ նրանք չեն կարող համարուել իբրև ապդու միջոց։ Կէֆիրը և կումիսը ալկոհոլիկ և կաթնային խմորումների կարգումն են և նրանք մնալով, օրըստօրէ աւելանում են նրանց ալկոհոլի մասերը՝ որը եղբէք ցանկալի չէ։

Դր. Հէյեմը բոլորովին մերժում է կէֆիրը նրա համար՝ որ կէֆիրը որովայնը լայնացնելով նպաստում է իւղաթթւուտի խմորման, իսկ նրա մնացորդները ստամոքսը հարուածում և սաստիկ վնասում են։ Խսկապէս օգտակարը լակտօբացիլինն է, որը չէ պարունակում ալկոհոլի հետքն անգամ։

Կոհենդին Մէջնիկովի լաբարատորիում ցոյց տւեց, որ շարունակ գործածելով լակտօբացիլին մենք կարող ենք հասնել մեր նպաստակին՝ աղիքների ֆլուրանների վերակազմութեան հարցում։

Կոհենդի նոյնպէս բացատրեց, որ հաստ ալիքի ֆլուրան խսկապէս փոխում է և կաթնաթթւուտի բացիլները գերիշող են հանդիսանում։ Սրա հետ միասին մէզի մէջ թիգրո-սերիալ քանակու-

Թիւնը նշանաւոր կերպով պակասում է, որը ցոյց
է տալիս ֆէնոլի, ինդալի, սկատօլի և ուրիշ թունա-
լի նիւթերի նեխումների նուագումը:

«Միզային թթւուտ» կոչւած թունաւոր միկ-
րոբների բազմանալուն եթէ որևէ արգելք չը լինի՝
փոխազրուելով աղիքների մէջ, առաջացնում են
մեր առողջութեան վրայ զանազան տկարութիւն-
ներ, ինչպէս մարսողական օրգանների, սրար, ներ-
վային սիստեմի, նոյնպէս մորթու վրայ և այլն, որոնք
խափանում են լակտօբացիլինի գործածութեամբ:

Մէջնիկովը գիմեց շատ երկիրների վիճակա-
գրութիւնների, նոյնպէս նրանց կենցաղների և հա-
ւաքեց բազմաթիւ հարիւրամեայ երկայնակեցների
մի մեծ ցուցակ և յիշեց ի միջի այլոց շատերի ա-
նունները և նրանց գործածած մնունդները: Բուլզա-
րացի բժ. Գրիգորով հարիւրամեաների և 150 ամեա-
ների ապշեցուցիչ մի մեծ ցուցակ ներկայացրեց, որ
հաւաքած էր բուլզարական մի նահանգից, որտեղ
«եօղուրտ»-ը (մածունը) կաղմում է նրանց
մնունդի էական մասը: Բուլզարական մի ուրիշ նա-
հանգից հարիւր և հարիւր յիսուն ամեանների մի
մեծ ցանկ էլ հաւաքել է Շիմինը, որի մէջ յիշուած
են շատերի անունները, որոնք պահպանել են իրանց
յիշողութիւնները և ոյժերը, և որոնց անունդը բա-
ցառաբար նոյնպէս եղել է հաց և «եօղուրտ»: Հե-
տևապէս, նրանք՝ որոնք երկար են ապրել, առատօ-
բէն գործ են ածել «եօղուրդ», «մածուն», sour milk,

(սրանք նպաստաւոր պայմաններում են պատրաս-
տուած և պարունակում են լակտիկ ասիտ—կաթնա-
թթւուտ) և նրանց երկարակեցութեան գլխաւոր
պայմանը եղել է միայն մնունդը: Այս հիման վրայ
Մէջնիկովը սկսեց իր հետազոտութիւնը: Մարդու
աղիքներում աճող միկրոբները նեխման և կղկղան-
քի թոյներն են, որ պատճառում են զանազան հի-
ւանդութիւններ և կեանքը հասցնում են կանխա-
հաս ծերութեան և մահուան:

Մի համեմատութիւն. օրինակ՝ Բուլզարիայի
4 միլիօն աղիքնակութիւնից 3800 հոգի ապրել են
150 տարուց աւելի, իսկ 100 տարեկան ապրողները
բազմաթիւ են: Այն ինչ Գերմանիան, որ ամենաա-
ռողջ և բարեկեցիկ աղին է համարւում Եւրոպայում
և ունի 61 միլիօն ժողովուրդ, միայն 78 հոգի ապ-
րել են 150 տարեկան: Իսկ Միացեալ Նահանգնե-
րում ոչ միայն 100—150 տարեկան ապրողներ կա-
րելի է ասել չկան, այլև 50—60 տարեկան ապրող
ները շատ սակաւ են, չնայելով նրանց տնտեսական
միջոցների առաւելութիւններին և բնակարանների
առողջապահական պայմաններին, բացի մի առողջ
ամերիկացից, որը 84 տարեկան է, բայց ինչպէս
ասում է, նա պարտական է մածուն, թէ իր առող-
ջութիւնով և թէ իր երկարակեցութիւնով:

Մէջնիկովը ասում է, որ բազմաթիւ փորձեր
են անում զանազան խմորումները կանոնա-
ւորելու մաքուր կուտուրայի միջոցով և մշակումը

լաւացնելու գինու, մրգաջրերի, պանիրների և այլն. այժմ գլուխութեան շնորհիւ ժամանակն է, որ մարդ մշակէ նման մեթոդներ և կատարելագործէ իր աղքների խմորումները: Ինչպէս Կոհէնդին ապացուցեց, լակտօբացիլինը հիանալի կերպով ընտելանում է մարդկանց աղիքներում և կարող է ծառայել կազմակերպման, այսպէս ասած՝ մարգու վայրի աղիքները փոխել կուլտուրական աղիքների: Առաջամար անհրաժեշտ է փոխել կաթնային խմորման տեխնիկան:

Մէջնիկովը նկատում է. —

Ես համոզուած եմ, որ շատ անյաջող գէպքեր, որ պատահում են լակտօբացիլինի միջոցով աղիքային հիւանդութիւնները բուժելու ժամանակ, դրանց պէտք է վերագրել կաթնախմորումների վատ պատրաստութիւններին: Տարրալուծելով դրանց, շատ յաճախ գտնում էի նրանցում բուլգարական բացիլի փոխարէն ուրիշ զանազան տեսակ բացիլներ, և երբեմն վասակար միկրոբներ. ուրեմն չը կայ ոչինչ զարմանալու, որ նման պատրաստութիւնները աւելի շուտ վկան են բերում քան օգուտ (Русск. Сд. № 8, 1911 թ. «Молочные микробы». Мечникова).

Հստ Ֆուարի և ուրիշների հետազոտութեան՝ լակտօբացիլինն ունի ամենաթեթև մարսողական յատկութիւն, և պարունակում է մեծ քանակութեամբ աւելի սպիտակուցային նիւթեր, կաթնաշաքար, իւղ, քան թէ կաթը, կէփիրը, կումիսը և կաթնային այլ

խմորումները, այնպէս որ լակտօբացիլինը իր սննդարար նիւթերի բովանդակութեամբ բռնում է առաջին տեղը բոլոր կաթնային խմորումների մէջ: Նոյնպէս հանքային նիւթեր աւելի շատ է պարունակում իր մէջ քան կաթնային այլ խմորումները և որ գլխաւորն է՝ լուծուած դրութեամբ: Միևնույն ժամանակ պէտք է գիտենալ, որ կաթնային միկրոբները և առանձնապէս նրանց ամենալաւը, ինչպէս բուլգարական մածնաբացիլը պատուաստում են ոչ գիւրութեամբ մեր աղիքներում. դրա համար նրանց պէտք է շաքարանիւթ, որոնք չը կան մեր հեռաւոր մարսողական գործարաններում, այսինքն հաստ աղիքում: Բոլոր շաքարանիւթերը, որոնց ընդունում ենք, արագ ծծում են մեր բարակ աղիքի վերի մասերը և չնա հասնում մինչև այնտեղ, որտեղ կատարում է կոփւը օգտակար և վասակար միկրոբների մէջ: Այն բոլոր սննդները, որոնց գործ են ածում մարդիկ, միայն արմաւները, ինչպէս վերջին հետազոտութիւնները ցոյց տըւին, ընդունակ են հասցնել շաքարանիւթեր հաստ աղիքը և նպաստել լակտօբացիլինի յաղթութեան:

Լակտօբացիլինը մի քանի տարի գործածելուց յետոյ՝ բռնեց իր հաստատ և արժանաւոր աեղը ներկայ բժշկութեան մէջ: Մի քանի երկրներում բժիշկները փորձեցին բուժել նրանով աղիքների զանազան հիւանդութիւններ:

Ահա բազմաթիւ փորձերից մի բանի օրինակներ: Յայսնի է, թէ որքան դժուար է բուժել ծըծկեր երեխաների աղիքների հիւանդութիւնները: Այդ հիւանդութիւնների համար յանձնարարուած զանազան անյաջող միջոցները գործածելուց յետոյ, բժիշկ կօտցը Մագտերուրգում սկսեց բուժել նրան լակտօբացիլնով: Նոյնպէս նա լակտօբացիլինով բուժեց շատ ծծկեր երեխաների աղիքների խրօնիկական հիւանդութիւնները:

Բազմաթիւ ուրիշ բժիշկներ ունեցան միևնոյն հետեանըները: Ոչ միայն ծծկեր և փոքր երեխաներ, այլև չափահամներ, որոնք երկար ժամանակ տառապում էին աղիքների հիւանդութիւններով, ընդունելով լակտօբացիլին՝ բոլորն էլ բուժեցին:

Ստամբսի հիւանդութիւնների յայտնի մասնագէտ բժիշկ Վերգելէ, որը հրատարակեց իր սահմատօրիայի ստամբսի խրօնիկական հիւանդութիւն ունեցեղներից 20-ի ցուցակը, որոնք բուժուել են միայն լակտօբացիլնով, հիմունիկով իր փորձերի վրայ՝ նա ասում է. կաթնաթթւուալ ոչ միայն հիւանդի կերպով կատարում է ստամբսի հիւթի գերը, այլև նա ունի շատ առաւելութիւններ, երբ զանազան պատճառներով ստամբսը չի կարող արտադրել այդ հիւթը:

Մի կին տառապելով աղիքի բորբոքումով, որը վիճնայի հիւանդանոցումն էր, նրա հիւանդութիւնը չէր բուժուում որևէ միջոցով ամբողջ 13 տարի. այդ

կինը տանջուում էր լուծողութեամբ, որից նա սաստիկ նիհարել էր, փոխելով զանազան դեղօրայք և պահեցողութիւններ, բայց առանց որևէ օգուտի. վերջապէս բժ. Բօնդին վճռեց տալ միայն լակտօբացիլին. հետեանըը հիւանդի էր. լուծումը դադարել էր, հիւանդի կշիռը աւելացել, և նա հեռացաւ հիւանդանոցից բոլորովին առողջ: Այդ դէպքը առանձնապէս հետաքրքիր է, որովհետև նրա արտաթորման մէջ գտնուել էր այն միկրոբը, որը դիտութեան մէջ յայտնի է Պարատիֆօղի բացիլ անունով, շատ նման այն միկրոբի՝ որը առաջացնում է տիֆ: Այդ բացիլը կարող է առաջացնել մարդկանց աղիքների խանգարումն: Այդ հիւանդ կինը լակտօբացիլինը գործածելիս՝ արտաքսում էր մեծ բանակութեամբ այդ պարատիֆօղի բացիլները, իսկ հիւանդը բուժուելուց յետոյ այդ միկրոբները բոլորովին ոչընչացնաւ: Այս օրինակը և գրա նման շատեր ցոյց են տալիս, որ լակտօբացիլինը ոչ միայն կարող է արգելել նեխիչ միկրոբների բազմանալը, այլև նրանք միևնոյն ժամանակ արտաքսում են պարատիֆօղի և այլ բացիլները, որոնք մնասակար են մեր առողջութեան համար: Հետեապէս լակտօբացիլինը (կաթնաթթուուտ) ունի այն յատկութիւնը, որ ոչ միայն բուժում է աղիքների բորբոքումը, այլ միևնոյն ժամանակ ոչնչացնում է իսկական նեխման աղբիւրը:

Բժիշկ Բրօշէր մի շաբք կլինիկական հետազոտութիւնները հիւանդների մասին ֆրանսիայում,

որոնք բուժուել են լակտօբացիլինով, ցոյց են տալիս, որ նրանով բուժւում են սաստիկ լուծում, արևալուծում, աղիքների բորբոքում, խրօնիկական ստամոքսա-աղիքային կատար ունեցողները և այլն:

Իսկ Գ. Թ., որը 18 ամիս տանջում էր խրօնիկական ստամոքսա-աղիքային բորբոքումով, ծայրայեղութեան հասած թուլութիւն ունէր, և անկառող էր քայլ անելու. նա գործածել էր երկար ժամանակ շատ տեսակ դեղօրայք և ոչ մի օգուտ չէր տեսել և յուսահատուած միայն իր մահն էր ցանկանում, որպէսզի ազատուի անտանելի տանջանքներից, բայց նա հիմնաւորապէս առողջացաւ լակտօբացիլին գործածելով: Մի տիկին, որը 10 տարի տառապում էր ստամոքսա-աղիքային անմարսողութիւնից, առանց որևէ օգուտի գործադրեց ամեն միջոց, իսկ երբ ընդունեց լակտօբացիլինը, կարճ ժամանակից յետոյ բոլորովին առողջացաւ և հեռացաւ հիւանդանոցից: Մենք չենք կամենում առաջ բերել հարիւրաւոր նման օրինակներ և այս բժիշկների անունները, որոնք հիմնուելով իրանց սանատօրիաներում կատարած բազմաթիւ փորձերի վրայ, նկարագրել են մանրամասն այն հիւանդների անյուսալի դըրութիւնները, որոնց վրայ ամեն միջոց գործադրելով՝ ոչ մի օգնութիւն չկարողացան հասցնել այդ մահուան դատապարտուածներին: Վերջապէս նշանակելով լակտօբացիլին այդ հիւանդների համար, բոլոր բժիշկներն էլ ուղղակի հիացմունք յայտ-

նեցին նրա կատարած բուժարար յատկութեան մասին: Որովհետեւ այդ մահուան դատապարտուած հիւանդները ընդունելով կարճ ժամանակով լակտօբացիլինը՝ բոլորն էլ լիովին առողջացան:

Մէջնիկովը սիստեմատիկ հետազօտութիւն կատարելու նպատակով պատուաստել է իրան տենդով, որը ինչպէս ինքն է ասում, վատ է ներգործել նրա սրտի վրայ. յայտնի հանգստացնող միջոցներ գործ ածելիս, աւելի ուժեղացել է նրա սրտի հիւանդութիւնը առանց որևէ օգուտ բերելու: Յետոյ դիմելով որոշ պահնեցողութեան և ընդունելով որոշ չափով լակտօբացիլին, նա ասում է «Այժմ իմ առողջութիւնս այնքան լաւ է, որ չնայելով իմ օճճառքի տարեկան հասակիս, ես կարող եմ կատարել երկարատև աշխատանք»:

Մէջնիկովը խորհուրդ է տալիս այն մարդկանց, որոնք ցանկանում են ապրել առողջ և երկար, չգործածել որևէ տեսակ ալիքոնուական խմիչքներ. միև կարելի է ուտել ոչ աւելի քան սրական 25—30 զօլունիկ, ուտել միայն եփած բուսեղին, շատ օգտակար է արմաւը, իսկ լակտօբացիլինը անհրաժեշտ է ընդունել օրական մի ֆունտի չափ, որպէս հակամարտ մեր աղիքների նեխումների և միենայն ժամանակ ամենակարևոր սննազանիւթ մեր կազմուածքի համար, և որը աւելի օգտակար է նրան ընդունել շաքարով կամ քաղցրաւինիքներով:

Մէջնիկովին վերջապէս յաջողուեց վարակել

փոքր ճագարներին ասիական խօլերայով, որոնք սովորաբար ենթակայ չեն այդ հիւանդութեան: Ներմուծեց նրանց սնունդների մէջ խօլերայի բացիլների հետ մի քանի ուրիշ տեսակ միկրոբներ էլ, որոնք նպաստում են խօլերայի բացիլների զարգացման: Եւ հակառակը, մի ուրիշ խումբ ճագարների էլ նա պահպանեց խօլերայի վարակումից, սերմուծելով խօլերայի բացիլի հետ մի քանի հակամարտնչող բացիլներ, և այդպիսով ազատեց նրանց վարակումից:

Այդ փորձը նոյնպէս ցոյց է տալիս, թէ ինչպիսի դեր են խաղում թունաւոր նեխիչ բացիլները և թէ հակամարտնչող բակտերիաները մեր աղիքային ֆլորաներում, այն է նեխիչ միկրոբները շարունակ ձըգտում են թունաւորել մարդու կեանքը, իսկ հակամարտնչող լակտօբացիլինը լուծում և արտաքսում է վնասակար միկրոբներին:

Մեջնիկովը և ուրիշ բազմաթիւ յայտնի պրօֆէսորներ և բժիշկներ, որոնք հետազոտութեան փորձեր են կատարել, թէ ինչ ազդեցութիւն ունի լակտօբացիլինը մեր կազմուածքի վրայ, բոլորն էլ հաստատում են, որ լակտօբացիլինը մարդու համար ամենակարեւոր սննդանիւթերից մէկն է, և նրա բարերար ազդեցութիւնը մեր առողջութեան վրայ միանգամայն անփնահատելի և անփոխարինելի է:

Մեջնիկովը իրաւացի է ասում. «Մեր որոնու-

մի նպատակն այն է, որ մարդու վայրի աղիքային ֆլորաները փոխուին կուլտուրական աղիքային ֆլորաների, որոնք կունենան բարերար ազդեցութիւն մեր առողջութեան վրայ: Բոլոր հետազոտութիւնների փաստելը ապացուցանում են, որ այս նպատակը ոչ թէ մի երկակայութիւն է, այլ մի ապացուցուած իրականութիւն: Որովհետեւ մեր աղիքային ֆլորաների վնասակար բացիլները արտաքս սելով փոխանակում է նրանց լակտօբացիլինով:

Լակտօբացիլինը ընդունւած է իբրև բուժիչ միջոց հետևեալ հիւանդութիւնների.

1. Անմարսողութիւն և պնդութիւն.
2. Ստամոքսի նեղութիւն, կամ խանգարումն.
3. Լեարդի և երիկամունքի հիւանդութիւններ.
4. Աղիքների նեխումն.
5. Մալարիա.
6. Տիփ և բծաւոր.
7. Աղիքների անկանոն խմորումն.
8. Խրօնիկ գլխացաւ.
9. Ստամոքսի կամ լեարդի անկարգ ցաւ:
10. Ստամոքսի կամ աղիքների կատար.
11. Արնալուծութիւն կամ դեղինթերի.
12. Միզակաթութիւն.
13. Զանազան տեսակ սրտի ցաւ.
14. Երիկամունքների ջրգողութիւն.
15. Սակաւարիւնութիւն.

16. Շնչերակների կարծրացումն.

17. Ներվային սիստեմի շփոթութիւն, ինչպէս
մեղմ տեսակի յիմարութիւն, մելանխոլիա կամ մը-
տաւոր ձնշումն.

18. Արեան ինքնաթունաւորումն.

19. Ստամոքսի քաղցկեղ (ռակ), որի զար-
գացման արգելք է լինում խափանելով նրա խմբումը:

Այս գրուածքը կազմելիս մենք օգտուել ենք
И. Мечниковъ „Этюды о природѣ человѣка“, рус-
ское изданіе. Москва 1904 г. Մէջնիկով. Կաթնային
միկրոբներ և նրանց օգուտը մարդու առողջութեան
վրայ. («La Revue» և „Русск. Сл.“ № 8, 1911 г. Мо-
лочные микробы Мечникова). Lactobacilline, клини-
ческія изслѣдованія Г. Л. д-ра Брошѣ. Сборникъ
статей посвященный И. Мечникову, изданіе обще-
ства русск. врачей въ Москвѣ, № 18. Նուիրուած
Մէջնիկովին ֆրանսիական և ամերիկական հրատա-
րակիչներից. Scientifically soured milk և այլն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0262450

13595

Մի քանի տարի Ամերիկայում պարագելով
պրօֆ. Մեջնիկովի նորագոյն սիստեմով լակտորացիների պատրաստութեամբ, պատիւ ունիմ յայտնելու յարգելի հասարակութեան, որ այժմ Թիֆլիսում ձեռնարկած եմ լակտորացիների պատրաստութեան: Միևնոյն ժամանակ խնդրում եմ իմ պատրաստածը չը շփոթել նոյն անուններով պատրաստած կաթնեղէն խմորումների հետ:

Լակտորացիների պահեստը առ այժմ գտնուում է
Бебутовская № 20. Ա. Իսպիրիանի տօտ:

Գի 66 է 10 կոս.

Ժամանակ է բոլոր գրախանութերի մօտ